# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094102-12Բ

ք. Երևան

<<29>> 01. 2015 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Մ. Ղազարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու մի կողմից, և <<Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ>> ՊՈԱԿ-ը, ի դեմս ինստիտուտի ռեկտոր Վ. Առաքելյանի, որը գործում է ինստիտուտի կանոնադրության հիման վրա, այսուհետ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի 09.4.1.02. <<Բարձրագույն մասնագիտական կրթություն>> ծրագրի շրջանակներում Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի միջին տարեկան 331 ուսանողներիի համար հաշվարկված, ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողներին, ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման պարտավորությունները:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է մինչև 236929800 (երկու հարյուր երեսունվեց միլիոն ինը հարյուր քսանինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի փոխհատուցումը՝ 3571530 (երեք միլիոն հինգ հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր երեսուն) ՀՀ դրամ և մասնակի փոխհատուցումը՝ 591000 (հինգ հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3. Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել:

## 3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 6.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ ա տ վ ի ր ա տ ու | Կ ա տ ա ր ո ղ |
|---|---|
| ՀՀ կրթության և գիտության | <<Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական |
| նախարարություն | ինստիտուտ >> ՊՈԱԿ |
| ք. Երևան, Կառավարական 3 շենք | ք. Երևան, Ա. Մանուկյան-11 |
| ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն | <<Հայէկոնոմբանկ>> Մյասնիկյան մ/ճ |
| ՀՎՀ 900011034130 | ՀՎՀ 163038103145 |
| Նախարարության աշխատակազմի | |
| ղեկավար՝ _____ Մ. Ղազարյան | Ռեկտոր՝ _____ Վ. Առաքելյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |